

ՇԱՐՇՈՒՄ

R. P. Kalmearian, Mechitharistengasse W. 4 Vienne (Autriche)

«Charjoun»
Varna (Bulgarie)

Մուտքի արժեքը
Մուտքի արժեքը 12 Ֆր.
Վեճակայ 6 »
Երեսուսակի համար Տարեկան 15
Վեճակայ 8
Մուտքի արժեքը համար Տարեկան 3 Ֆր.
Վեճակայ 1.50 »
Վեճակայ ՎՃԱՐԵԼԻ
Մուտքի արժեքը համար 40ս.
Իսկ վերջին երեսուսակի 20 սահմանը երեսուսակի 20 ֆր. գեղջ կրչայ :

Վաճակի համար ձեռքի 10 սահման

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշխարիայ համար ձեռքի
= 15 ՍԱՆԹԻՄ =

ՇԱՐՇՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԵՐԻ ՎՃԱՐԷ

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԿՈՒԻ

Անցեալ օր Պուշխարիայ հեռագրով եր Երկու հայ հրոսախմբեր, որոնցից մէկը ընդհարում ունենալով իրեն հետապնդող ժամգարմեների հետ, գրանց պետին և մի քանի ձիեր սպանելով ազատ համարձակ շարունակել է իր ճանապարհը: Միւս հրոսախմբին հետեւող ժամգարմեները դեռ չեն կարողացել Ֆէզայի ներքին ետեւից հասնել և ինչպէս երեւում է, չը պէտք է հասնեն:

Յիւնեար տասին, կրկին Պուշխարիայ «Տան» լրագրին հեռագրում են՝ Վանի գաւառում հայերի և քրդերի միջև լուրջ կռիւ է տեղի ունեցել:

Արդէն մեր Մուշի թղթակիցը ժամանակին յայտնեց թէ միայն Անդրանիկը չէ որ գործում է, այլ կան և ուրիշ երկու խմբեր և, որ ամենից ուշագրաւ ու ուրախալին է, այդ երեք խումբերը միշտ կարեւոր պարագաներում կարողանում են միասին հաւաքվել և իրենց անելիքը վրա լրջօրէն խորհրդածել:

Այս իրողութիւնները պայտուցանում են որ խմբերը օրինաւորապէս կազմակերպված և որոշ ծրագրով գործող հրոսախմբեր են և այնպիսի մի տակտիկայով են գործում, որ կարող են իրենց անցած տեղերում էլ հետզհետէ այդ տեսակ խմբեր ստեղծել, որովհետեւ ներկայումս հայկական ամեն մի անկիւնում գլխից ձեռք քաշած յեղափոխականներ կան ու մարդ եւ գործ են փնտռում ասպարէզ նետվելու համար:

Զինակիր հրոսախմբեր մեր յեղափոխական կեանքի մէջ երեւացել են բաւական թուով, սուհայն գրանք մէկ մէկ են եղել և ոչ միաժամանակի Այսօր հրոսախմբային սխաւէժը մտնում է իր

զարգացման երկրորդ շրջանի մէջ. նրանք մի քանի հատ են, միաժամանակ երեւում են զանազան տեղերում, և պէտք եղած միջոցին կարողանում են միասին համախմբվել:

Սերմն սկիզբն է գրվում պարտիզանական կռիւ, որը կատարելութեան հասցրին բօշրները թրանսվալում Անդլիայի հակառակ զօրութեան դէմ: Օրբնն տեղի ունենում այն, ինչի որ պիտի յանգէին մե յեղափոխական նախնական շարժումները:

Պարտիզանական կռիւ, տեղի լաւ զինված, աւելի շատ խմբերով, ահա պատմաւոր միջոցը պատմաբան թոյլ ժողովրդի իր զօրաւոր բռնաւորի դէմ: Պարտիզանական կռիւ խմբերն են, որ անսպասելի հարւածներ են տալիս ճշող զօրաւոր կառավարութեան, բաժան բաժան են անում նրա ուժը—զինւորական կեդրոններից մաս մաս դուրս են քաշում զօրքերին և շարժում նրանց, կառավարութիւնը յոգնեցնում, յեղափոխական թագնւած տարրին ախն ու սիրտ տալիս կուռելու համար, և վերջի վերջի գործը հասցնում ընդհանուր ապստամբութեան:

Պարտիզանական խմբերը հատաքական ահաբեկչներ են, որոնց հարւածները տեղում են ոչ վատ անհատների գլխին, այլ թշնամու զանազան հատածներ ի գլխին:

Հայ յեղափոխութեան համար մեծ յառաջադիմութիւն է պարտիզանական հրոսախմբերի երեւան գալը և հիմա, երբ այդ իրողութիւն է, մեր յեղափոխական մարմինները, մանաւանդ Գաշնակցութիւնը ամեն ճիշդ պէտք է թափեն այդ խմբերի թիւը բազմացնելու հոգ չէ, ամէն խմբում 10—20 հոգի թող լինի, բայց խմբերը թող շատ լինեն, նրանք թող գոյութիւն ունենան ամեն մի յարմար անկիւնում, անտառների, ձորերի մէջ, նրանց գերը թող լինի հայ գիւղերը պաշտպանել

զանազան յարձակումների դէմ, քրդերի վրայ սարսափ տարածել, իրենց հետապնդող զօրքերին ջարդել:

Որքան շատ լինեն այդ խմբերը այնքան էլ հայ ժողովուրդը յեղափոխութեան կը վարի. միշտ կը ջանայ, ամէն զոհուած յանձն առնելով, հրոսախմբերի պաշար մատակարարելու, նրանց զոյութեան մշտական կերպարանք աւելու:

ՎԱՐԳՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիլիստրէ, 8 յունվար
Երկրորդ անգամ ըլլալով, երէկ գիշեր քաղաքիս Սալոն Օրիէնթալին մէջ ներկայացուցեալ Միւրուսան Արժուոնի ողբերգութիւնը սիրող երիտասարդներու աշակցութեամբ: Խաղը արուեստի նպատակով շ. Յ. Գ. Կոմիտէին: Ողբերգութեան յաջողութեան հանգուցեալ Պարոնեանի Մեծապատիւ Մուրացկանները անու կատակերգութիւնը:

Զեմ կարծեր որ հանդիսատես հասարակութիւնը դերակատարներէն գեղճ ըլլալու պատճառ մը ունեցած ըլլալ, ամեն սիրող ըստ կարի իր գերին մէջ յաջողեցաւ: Մասնատարաբար յիշատակելի կրնայ համարուիլ ողբերգութեան մէջ Պ. թորոս Լալէեանց որ Վահրամի գերը գրվելիքէն կատարեց: Ոչ նուազ յաջող էր նաեւ Պ. Ալիքսան Եազճեան իր ներսէս կաթողիկոսի գերին մէջ:

«Մեծապատիւ մուրացկաններու» մէջ բարձրագոյն նօթի արժան կը նկատենք Պ. Սարգիս Վարդաբանը որ բեմական կոչում ունի ինչպէս կը բեւայ:

Սիլիստրէի հայութիւնը փութացած է իր ներկայութեամբ քաջալերել նպատակով:

Ընդհանուր հասոյթ մտա 400 Ֆրանք կենթագրուի:

ԱՌԱՆՁԱՐ

Թ. Բաղարճը 41 Յունուար
Առիթով լը այս օրեր այցելեցի այս քաղաքը առաջին անգամ ըլլալով ձեր թերթին վերջին թիւի մէջ այս տեղի Ազգ. վարժարանի ազգային մարմինէն պաշտօնակոն նամակ մը ընթերցած ըլլալով, հետաքրքրուելով այդ խնդրի մասին ուղեցի տարբէն օգուս քաղել, հոս գտնելովս, և ազգային վարժարանի խնդրոյն վրայ մանրամասն տեղեկութիւն առնել:

Բայց ամենամեծ վիշտ մը զգացի, ապացոյցներու վրայ հոստատուութեամբ փաստերով համոզուելով, որ այդ պաշտօնակա՞ն (!) նամակի բովանդակութիւնն ամբողջովին ստուգութեան շատ հեռու կը գտնուէր:

Ես չեմ ուզեր երկարօրէն հերքել մանրամասն այդ պաշտօնական նամակը, այլ կուզեմ բաւականաւոր միայն հետեւեալ կէտով թէ ինչպէս ազգային վարժարանին պաշտօնական մարմինն, յանդգնած է այլօրէն հակոտնեայ նկարագրել, ի հարկէ դրոշմելով այդ նամակի վերայ իրենց ստուրագրութեանց քով պաշտօնական կնիքը:

Այդ նամակի մէջէն եւ կառնեմ միայն ուսուցիչ Տիար Ոսկերիչեանի մասին գրուածը, յորում կըսեն, թէ նա չունենալով տուեցութեան համար պահանջուած վկայագրերը և արտօնագրերը իրաւունք չունի ուսուցչութեան պաշտօն վարելու:

Այսօր առիթի բերմամբ Տիար Ոսկերիչեանի հետ տեսակցելու, նա առանց երկար խօսելու, առջիս գրաւ քանի մը պաշտօնական գրութիւններ, ինձ ապացուցանելու համար թէ այդ պաշտօնական զրուցութիւնն որքան խեղաթիւրուած էին:

Տիար Ոսկերիչեանի ունեցած ինձի համոզելու համար ցոյց տուած պաշտօնական գրութիւնը գրաւած էին պուլկարերէն լեզուաւ պաշտօնական տպուած բնագրով, վաւերացուած ամէնքն էլ

պուլիտրական արտաքին գործոց նախարարութեանը:

Գրանցից զատ, Տիար Ասկերիչեան ունի արտօնագիր մը, ստացուած իր համար, պուլիտրակէն լեզուաւ:

Լ. ՄԻՆԱՍԵԱՆ

Միջիւրեւ 13 յունիսար

Աւելորդ չեմ համարեր թրիպօլիս (Գորիկէ) արտարած ընկերէս մօտերս սաացած մէկ նամակէն քաղած լուրերը յայտնել ճարժումի ընթերցողներուն:

«Սիրելիս շուտով ննջլիական եւ Պրանտական մարտանաւեր պիտի գան հոս. քաղաքն իսաւրացոց պիտի արտի, խնդիրը շատ սուր կերպարանք առած է. տեսնենք, կարծեմ տաճիկը առանց պէժ գնելու պիտի բանձնուի: Թրիպօլիսը եղիպտոսի պէս պիտի ըլլայ»:

Յ. Գ. Պ. յս կիրակի, ծնունդ ժամին, անգլիական երկու զրահաւորներ եկան դեռ, ուրիշներ ալ կապտուին. մանրամասնութիւններ և արդիւնքը առաջիկայ փոստայով:»

Յարգելի խմբագիր, կը խոստանամ գտնել լուրերն ալ անմիջապէս հաղորդել ձեր թուղթի: Հին Հնչուհեան ՄԸ

ՄԱՅ ՏՕՔԹԵՕՐ ՄՕԼՆԱՐ ԱՆԹԱԼԻ

(1)

Սամուելիւարէն (Հունգարիա) կը գրեն մեզ յունիսար Յին (Ը. Ե.) Պուտաբէլի մէջ մեռաւ կարեւոր հայ դէմք մը, Տօքթ. Մուհար Անթալ, 54 տարեկան հասակին մէջ:

Հանգուցեալը երեւելի փաստարան եւ միանգամայն ավանդէն սիրուած ու յարգուած դէմք մը եղած է եւ ազդու դիրքի տէր: Իր քաղաքական գաղափարներու հակաակորդներն անգամ սիրած են զինքը: 28 տարեկան հասակէն սկսեալ երեսօտիան ընտրուած է Հունգարական փարլամենտին 30 տարի շարունակ եւ նոյն ժողովին դիւանին ատենակալի դերը կը կրէր: 10 տարի է ի վեր, Թղթակցած է Գերմանական, Անգլիական եւ Հունգարական հանդէսներու, եւ իր գրութիւնները մեծ ընդունելութիւն գտած են:

Ընթերեւ հայ հանգուցեալը լաւ սիրտ մը կը կրէր: Հայկական կոտորածները և մայր հայրենիքին վիճակը իր մեծ ցաւերէն մէկն էր:

Բաւական յոգեւորներ գրած է աս մասին «Թայգրի», «Տէյլի-Նիւզ» եւ Գերմանական ու Պրանտական լրագիրներու մէջ: Շատ անգամ ծայր բարձրացուցած է Հունգարական թրքախօս փարլամենտին մէջ: Հայ լեզուն լաւ կը խօսէր ու կը գրէր յիշեալը և իրեն միշտ պարծանք կը սեպէր հայ ծնած ըլլալը: Վերջին փամանակներս մտադիր էր ճամբորդութիւն մը ընել դէպի Հայաստան, բայց իր մահը իր ընտանիքը փճացուց:

Հանգուցեալը 30 տարեկան հասակին մէջ ամուսնացած էր Սիմեան Տ. Գրիգորի աղջկան՝ Օրբորդ Գլխանի թիկնի հետ, որ քղնի ու համեստ ընտանեկան տէր զարգացած արկիւն մըն է: Հանգուցեալը աղքատ ընտանիքի զաւակ եղած է, իր հայրը շր կրնալով իր ուսման պէտքերը հոգալ, ինքնօգնութեամբ սշխտուած է և իր ուշիմութեան շնորհիւ առաջացած: Ինքը սկիզբէն ի վեր մեծ գուրգուրանք ցոյց առած է աղքատներուն, եթէ մէկը իրեն դիմում մը ընէր նամակով, իսկոյն կը պատասխանէր զայն «անկեղծ բողբոջով» կոչելով:

Ինք ալ ու է նրախակն հարստութիւն չէ՛ ձգած. անի միայն երկու դաւակ՝ աղջիկ մը և 18 տարեկան մանչ մը Աշտար անունով, որը, կը յուսանք թէ, իր հօր պէս Հունգարահայ համայնքին սգտակար պիտի դառնայ հօրը զգալի բացը գոցել աշխատելով:

Սամուելիւարէն 40-50 պաշտօնական բարձրաստիճան անձնաւորութիւններ գնացին Պուտաբէլի հանգուցեալին մարմինը հոս փոխադրելու համար: Յուզարիւարութիւնը չքեղ կերպով կատարուեցաւ կառավարութեան ծախքով. քաղաքական կարեւոր պաշտօնները ներկայ էին. ամբողջ քաղաքը սուղի մէջ էր, սուներ, պաշտօնական վայրեր, եկեղեցի վարժարան ըտրը սեւերով պատեցին: Մարմինը թաղուեցաւ հայոց գերեզմանատունը:»

Սիրագրութիւնս իր անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնէ սյրի տիկին Գլխանի թիկնի և իւր զաւակներուն մաղթելով որ հանգուցեալ Տօքթ. Մուհար Անթալի բարի նպատակները իրագործեն անոր ժառանգները:

Փ. ՊՕԼՍԵՆ ԱՐՁԱԳԱՆՔ

«Ճարժումի մասնաւոր թղթակիցը շատ անգամ քաղաքէս գրած թղթակցութիւններով լուրեր կուտայ. սակայն վերջերս գրեթէ ինքզինք ընտրովին նոյն իրած է հանդէսներու և լուրաներու նկարագրութեանց: Անշուշտ ասոնք կարեւոր են, բայց կը փափաքէինք որ վերջերս անմահ Պետոյի մասին քաղաքիս մէջ անցած դարձածներուն վրայ ալ գրէր: Որովհետեւ բաւական ժամանակէ հետէ ի վեր կապանք, սրտիս դառն կսկիծը կը ստիպէ զիս գրել ձեռք առնել և մէկ քանի ատուով անցած գարձածները նկարագրել կանխառն ներողութիւն խնդրելով «Ճարժումի թղթակցէն»:

Այժմ չը յիշեմ Պետոյն: Այժմ չէ փախել անոր անուշ սեւակցութիւնը և անուշ ուրիշ բարեկարգ կամութիւնը: Գերազանցապէս անկեղծ էր նա, և այդ անկեղծութեանն այս անգամով ամէնքը կը

սիրէին զնա. ամէնքը կը յարգէին: Թշնամիներն անգամ կակնածէին անկէ: Այժմ կրնար կասկածել անոր, ազգասիրութեան և անշահախնդրութեան մասին: Այժմ կրնար կարծել թէ պիտի գտնուէր այնպիսի ցած արարած մը— բնտանիք մը— Փ. Պետոյի մէջ, որ պատառ մը հացի համար անմահ Պետոյի կախազանի շուտը պիտի պատրաստէր. անոր բանաբանութեան գաղտնիքները խնամքով քննել յետոյ, պիտի տեղերէր թուրք և թրքացած հայ լրտեսներու պետին շուրջը, պիտի հրաբարէր զանիկայ իր տունը, անոր երկար ճառեր պիտի կարգար և զանիկայ պիտի գրկէր Պետոյի բանտը իր բաժնետուն ստուգութիւնը ճշդելու համար: Պիտի նկարագրէր անոր Պետոյի հին գործունէութիւնը, Հայաստանի հողին վրայ գործած քաղաքործութիւնները և պիտի համոզէր այդ լրտեսներու պետը որ Մեծ Մարգարտանէն կարճի գաղտնէն անոր կախուելուն հրամանը բերել տար: Ո՞ր հայ կրնայ կասկածիլ այսպիսի ազգակիցի մը գոյութեան վրայ: Ո՞ր հայ կրնայ այսչափ ստորին ճիւղ մը ըլլալ: Ա՜հ, այսպիսի դժոխային ճիւղ մը գտնուեցաւ Փ. Պետոյի մէջ... որ իր փափաքին հասաւ: Վաղը պիտի լսենք թէ Մեծ Մարգարտան կարճի գաղտնի ամուսնական գումար մը յատկացուցած է անոր... այդ գրամը անմահաւալի Պետոյի արեան գինը պիտի ըլլայ...»

Պաշտելի Պետոյի կախուելուն լուրը հասածին պէս, մեր ճիւղակի տունը մեծ խնձոյք կարկուտէին... Պետոյին անարգ մահուն համար:

Մարդ չը կրնար ինքզինք զսպել ինչ որած էր Պետոյի այդ բնտանիքին: Որի՞ շարիք մը ըրած էր: Ահ, մարդ կարող չէ բաւական խոստ ածական մը գտնել այդ ընտանիքի երեսին շարունակ համար: Երբ կը խորհիմ այս ստորին և անարգ զուարճութեան վրայ, մարդկութեան նոյնպէս կը զգամ, Հրճուիլ իր արեանակցին և ազգակցին յանձնարով և ցաւով լի մահուան վրայ. սակիջեցիք մարդ արարածը զազանէն ալ վար: Եւ երբ կը տեսնեմ որ թաղականներ, քահանաներ և վարդապետներ կառավարական դուռները կը շրջին, եկեղեցիին օտարիկաներով և օտար կանապաններով կը լեցնեն անմահ Պետոյին վերջին յարգանք մը նուիրելուն արգելք ըլլալու համար, է՛հ, ու պոչանքս վերջին ատուածներն կը հասնի: Այս ատուածն ստորնութիւն...»

Իր ազգին համար զոհուող սուրբ զինուորի մը պէժ այսչափ հալածանք:

Այժմ, ովտաէն ալ վատը կայ: Մեր ստորին վարդապետէն ալ ցածը կրնայ ըլլալ: Երբէք չեմ պաշտպաներ Տէր Գոնեակ Ուրագիր: Բայց քանի որ Տ. Պաղճեան այսօր պաշտօնական անձ մ'է Տէր Գոնեակ պապան ինչ ալ ընէ, ամբողջ պատասխանատուութիւնը կը ծանրանայ Պաղճեան վարդապետին վրայ: Պետոյի յիշատակին եղած անարգանքը Պաղճեան վարդապետին գործն է մեզ համար: Այժմ կրնայ անոր յանցանքին մէկ մասը բեռնել ուրիշ ստորին արարածներու վրայ:

ՇԱՆԹ
1902 Յունուար 41 Յիւլիան

ՄԵՌՆԵՐԻ ԻՐԻԿՈՒՆ

Երկուր է, ամբողջ քաղաքը կը հրճուի ծնունդի երեկոյան հանդէսով: Տուններուն ծովին մի անկիւնը պարզ սենեակի մը մէջ վառարանին առջեւ, բոլորովին անասրեր քաղաքին ընդհանուր խրախճանքին նստած էր հայ գործաւոր մը: Անոր աչքերը յառած էին կրակին վրայ. որ մերթ աւելի և մերթ քիչ լուսաւորելով սենեակը՝ լուսեան միակ փոփոխութեան յառաջ կը բերէր: Նա ուշագրութեամբ կը հետեւէր կրակի ընթացքին. գոցեա անկէ իւրաքանչէր կամ խորհուրդ մը կը պահանջէր...»

Եւ իրօք քիչ յետոյ մրմնջաց «Մեր գործաւորներու կեանքն ալ աս վատող փայտին սրբան նման է: Բացը անխնայ կը հարուածէ զայն. միշտ և որ իր կիզիչ ազդեցութեան տակ մոխիր դարձնէ: Օտար գործատերերն ալ միթէ մեզ չեն հարուածեր. չեն ծծեր մեր արիւնը մինչեւ որ մեր մարմինն ու միտքը հիւսնու միջեւ բարոյապէս եւ Ֆիզիքապէս ընկճուինք. եւ այս ամէնը տեղի կուսենայ լոկ անոնց գրպանը լեցնելու և ամենակուլ ոգոյն յազորող սալու համար...»

Սոյն միջոցին վառող փայտերը ի մի հաւաքուեցան վառարանին յատակը, որոնց արտադրած լոյսը և տաքութիւնը ակնթարթ մը սթափեցուց զինքը. բայց ան նորէն ընկղմեցաւ իր խորհուրդին մէջ և շարունակեց

«Եթէ կայ տարբերութիւն մը կրակի ընթացքին և մեր կեանքին միջեւ այն է որ փայտը կը վառի մոխիրը զանոյն բայց նաեւ կը տաքցնէ և կը լուսաւորէ իր շուրջը. մինչդեռ մենք հակառակ մեր թափած արիւնոս քրտինքին ու է օդուտ չունինք մեր շրջանակին, մեր հայրենիքին ու ժողովուրդին համար: Վերաւոր հայրենիքի ծոցին մէջ այնքան զգալի է մեզ նման երիտասարդներու պէտքը. բայց մենք հոս հազիւ հազ մեր գոյնութիւնը կը քաղաւտենք:» Այս օրինակ խորհուրդներ շատ ան-

զամալի համար էին անոր գանկը Մինչև այն օրը սակայն վերջնական որոշման մը չէր յանգած : Ո՞վ գիտէ զեռ ինչ խրատներ չպիտի օրինակէր կրակէն : Եթէ նա նամակները գինքը չխանգարէր, սր Պետոսի եւ իր ընկերներու անխոխարինելի մահը կը պիտի լինէր . . . Սրտի անսիրտի գոռոն թեմաք կարգաց Եարժումի մէջ մահագոյժը որուն իր քաջանչիւր սողին երակները ուժգնօրէն կը արօթէին . . .

Ու նոյնիսկ ան իր իկունը պատրաստութիւն տեսաւ Պետոսներու շաղին հետեւելու մինչև կախաղան : Արդեօք միակը կը գնայ . . .

Գ.

Գերմանիա 7 յունվար

ԱՐՁԻՆՆԵՐՈՒ ՔԱԶԱՍՐ-ՏՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի մէջ չկայ տեղ մը ուր մը ջրի նման մեղ ակնառես չըլլան : Արեւ մանկութիւնն ի վեր, խաղի ժամանակ, անոնց հետ ծանօթացած ենք : Կա՞յ մէկը որ նկատած չըլլայ կենդանիներու այս ցեղը : Անոնց ժրջանութիւնը ասածի կարգ անցած է, և իրաւամբ : Բայ աստի մենէ շատ քիչերը թերեւս բազմ ունեցած են ուրիշ աւելի գերազանց յատկութիւն մը մը ջրի նման վերադարձու : Գիտնական բոսֆէսօր մը (*) ասոր վրայ լոյս կը սփռէ հետեւեալով .

«Մացառին մէջ մը ջրի նման մեղ շատ կը ծանծրացնէին, որոնք մեր բնակարանին շուրջը կը գտնուէին և շարունակ մեզի կ'այցելէին, տեսնալու համար ի՞նչ արդեօք տանելու կամ լափելու բան մը կայ : Մը ջրի նմանութիւն մեծ խումբ մը գրեթէ 50 սոք հետու կը գտնուէր, գործունեայ մը ջրի նմանք անկէ մինչև մեր տեղը ճամբայ մը շինած էին որ ծածկուած էր բնակարանի շուրջը և պարագ վերադարձողներով :

Այս մտտի զբացութիւնը անհասկնալի ըլլալուն համար, փորձեցի գտնուիլ հետազոտել, ինչ որ ամբողջը միատեղ այրելով կարելի էր : Ասոր համար այն մը նախախնային հատիկներ նկատելի, շատ աստի նմանութեամբ սր ու հեռացում յատկ պիտի բերէ : Անմիջապէս անգին իրաբանցում մը սկսաւ : Իմ կենդանիները ի բարկութեամբ հատիկներուն վրայ կը յարձակէին, կզակով զանոնք բռնելով՝ քիչ մը կը տանէին և յետոյ զժկամակութեամբ կը ձգէին գետին : Յետոյ ուրիշ մը կու գար զայն կը վերցնէր ու վերստին կը ձգէր, այսպէս շարունակաբար մինչև որ ամենափոքր հատիկն լսկ այն տեղէն հեռացուցաւ, ու աստի նման երթեւէ կը վերստին սկսաւ :

Որոշեցի աւելի զօրաւոր միջոց մը ի գործ գնել, և խումբին վրայ քանի մը կտոր «Բիանքալու» նետեցի : Առաջուան սրտակերը կը ներկայանայ, միջին թէ չը յաջողեցան վտանգաւոր նիւթը հեռացնել, որուն շողիցումը բնականաբար յատկ կը բերէր և շփումը ման : Այսու ամենայնիւ շատ մը մը ջրի նման փորձը տեսայ, որոնք կարծես կը բռնէին

(*) Պ. Բոսֆէսօրի 3 տարեայ չափ Ա. սարալիոյ մացառին մէջ բնակած է

կիցնային ու կը մեռնէին : Միմեկուն համար հետազոտութիւնն չը կրցայ շարունակել, բայց կակնկալէի որ յաջորդ ատուատուն ամէնքն այ հեռացած կըլլան : Որքան պարագայ, երբ յաջորդ օրը գետինը մեռած մը ջրի նման ծածկուած գտայ պատեւազմի գաշար մը նման, բայց «Բիանքալու» կտորները աներեւութացած էին : Եւելի քան խումբին կէտը այս յուսալուծ կտորն մէջ իրենց մահը գտած էր : Գիտնական սրբաճանկներուն յաջողած էր մահուան քաջասրտութեամբ ու իրենց կեանքին զոհաբերութեամբ թոյնը որ մահացու և վտանգաւոր էր, հայրենական օջախէն հեռացնելու, յորում ամէն քայլափոխ մը ջրի նման զիտեով մը ծածկուած էր :

Օրուան ընթացքին մէջ ինկած քաջերուն գիտնակները հեռացուցան, բոլոր հետքերը վերցուցան և յետանալու մնացեալները անհամատ կերպով արիւար պաշտպանուած բնակավայրին մէջ հանգիստ կապէին : Այդ փոքր միջատներու քաջասրտութիւնը որ ամէն ինչ կը գերազանցէ, որ եւ է որ ինչ արարած մը մտքին այ միտան հայրենասիրական զոհաբերութեան նկատմամբ կրնայ ջամբել, այնպիսի սպաւորութիւն մը թողուց վրաս, որ յաղթուած զրացիներուն ձա՞ճոյթը կը սիրէի կրել, որոնց քաջասրտութիւնը չէի կրնար ջլատել, բնաջնջել :

Մը ջրի նման օրինակ տանինք :
Գ.Ա.Ս.Ս.Ս.

ԱՆՅԱԶՈՂ ՕՐԻՆԱԿ

Եարժումի թիւ 377ի մէջ մի շատ հետաքրքրական թղթակցութիւն մը տեսայ «Պուրբէշիցո» օրը յարգելի թղթակից Խմեն Նուրէլ է Պուրբէշի հայ գաղութի մտնաւանդ ուսման հայոց պակաս կողմերը իրանց իսկական գոյներով ի բաց հանելու : Շատ ու շատ յաճախ եմ հանդիպում այդպիսի գրուածքներին, որով յարգելի թղթակիցները իրանց ցուր միջոց ուրիշին են պատմում և ցաւի դարձանն ալ կարծես սրբի շփոտանքին մէջ են օրոնում :

Գրեթէ անտես քայառութեան ամեն ոք հետաքրքրում է ուրիշի ցաւերով իսկ բուն իրանց անձնական ցաւերը որ փրտտելու աստիճան նետած են ոչ ոք նկատի չէ ունեցել, և ոչ էլ իր պակասութիւնը տեսնել վերջ ուղղելու յամա կամքը ունեցել :

Սա ինքնին միտաւոր երեւոյթ է, որը գմբաղգարար մի համաճարակ անտէ գարծել բոլոր Արեւելցիներին (հայերին) համար : Սրա դարձանը ուր կարելի է գտնել :

Յարգելի Խմեն իւր թղթակցութեան անպիսի մասում Ամերիկան իբր օրինակ բերելով չէ զլացել մի կարուկ բայց իմաստալից զօրասունք չոայլել նրա հաս-

ցէին : Բայց իրօք Ամերիկայի հայը տէրն է այն լաւ ու ազնիւ յատկութիւններուն ինչ որ պիտի թղթակիցը կը յաւակնէ կարծել : Ետեան մը չեմ, բայց իրաց այս վիճակի հանգէպ անշարժ առանս ալ չեմ կարող ըլլալ ուստի թող ներսուր ինձ ըսել թէ հեռուէն վտանգ թոչունը լաւ եւ մեծ կըլլայ : Յայտնեմ թղթակցութեամբ պիտի ջանամ նկարագրել ամբողջ ամերիկահայ գաղութի վերաբերումը զէպի հանրային գործը և մասնաւորապէս զէպի յեղափոխութիւնը :

ՃԻԶՍՆ
Ամերիկա 16 յունվար

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկուստ օրը խմամբ 1901 զեկ. 9ի ընդհ. ժողովը իւր օրակարգի մէջ ունէր նաև համարառութիւն նախորդ Գործ. ժողովին : Նախորդ Գործ. ժողովը իւր վեցամսայ մանրամասն հաշուեկշիւն ներկայացուցած էր ընդհ. ժողովին և ընդհ. ժողովը այդ հաշուեկշիւն քննելու և ճշգրտութիւն վաւերացնելու համար հաշուեքննիչ յանձնաժողով մը կազմած էր և յանձնաժողովը հաշուեկշիւն և հաշիւները մանրամասն քննել վերջ իր տեղեկագիրն ընդհ. ժողովին բերած էր որու բնագիրն հետեւեալն է .

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դեկտ. 9ի տեղի ունեցած երկուստ օրը խմամբ ընդհ. ժողովը պաշտօն յանձնեց մեկ քննել Գործ ժողովոյ վեցամսայ հաշուեկշիւնը 1901 ապրիլ 1էն մինչև 1901 սեպտեմբեր 30: Յանձնաժողովս իր գեկա. 12 ժողովոյ մէջ Գործ. ժողովոյ ամբողջ հաշիւները քննելով համապատասխան գտաւ այն հաշուեկշիւն որ Գործ. ժողովը ներկայացուցած էր ընդհ. ժողովին :

Ուստի յանձնաժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել Գործ. ժողովոյ հաշուեկշիւնը ճշտութիւն : Անդամը հաշուեքննիչ յանձնաժողովոյ Յակոբ Աղամեան Պ. Կիրքեան Լեոն Թընիկեան
Վարնա 19 դեկտ. 1901

Ընդհ. ժողովը վերոյիշեալ տեղեկագիրն ստանալով շատ գոհ մնաց և իւր խորին շնորհակալութիւն յայտնեց նախորդ Գործ. ժողովոյ մէկ տարուան անձնուէր և արդիւնաւէտ գործունէութիւններուն ու ուղղափա պաշտօնավարութեան, և յանձնարարեց գիտնիտ սոյն տեղեկագիրն հրատարակութեան տալ և հրապարակաւ իւր կողմէ շնորհակալու-

թիւն յայտնել նախորդ Գործ. ժողովոյ :

Միտմք յարգանք
Ի զիմաց ընդհ. գիտնի
Ատենադպիր Ատենապետ
Արշամ Փափաջեան Յ. Ս. Թոսպըրեան
(Կիւի)

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պոլսոյ մէջ արամագրութիւն կայ Գում Գարուի Մայր եկեղեցին նորոգել, այդ մասին Մնունգի առասօլը Օրմանեան քարոզ խօսեր է :

Ժողովրդին մէջ մաս մը կը մտածէ նաև Մայր վարժարանը նորոգել :

Ստացանք. «Բանասեր» չորրորդ համարը և յաւելուած մը «Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ» հեղինակութիւն Բ. Խալաթեանի :

Լոյս տեսաւ Գումանի Տրդ համարը կաթողիկոսի կողմովը միտմք :

Երանի եթէ կաթողիկոսի կողմովը սպգէր արատասման ապրող ունեւոր հայերին վրայ և անոնք Գումանի բաժանցրդ զըրւելով ներքին հայաստանի գիւղական վարժարաններուն :

Բարեկի հայոց եկեղեցիին շինութիւնը պիտի սկսուի այս գարնան եւ պիտի վերջանայ 1903ին :

Ազգային ստրուկ պատիւաբարանը Սուլթան Համիտին երախտագրտական ուղերձ մը մատուցեր է անոր՝ ճնշիլ աւթիւն Սկիւարի Ս. Խաչ եկեղեցւոյ գանձանակը ճնշիլ երկրորդ օրը զողոյսեր է :

Միտմքեան յորեւանի յանձնախումբը գեղեցիկ մտաւ ըմբ ձուլել աւելի է Միտմք Արքայի պատկերով, որոնցմէ զլրկած է ազգային զանազան հիմնարկութիւններու եւ անոնց, որոնք համակրանքով վերաբերուցան մեծ հայուն յիշատակին :

Տանկատանի քանի մը հայ կրթարաններու աշակերտներ իրենց մէջ հանգանակութիւններ բերել են ինպատակ կարինի արկածելոց :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Ի Ա :

Պօթիայի թրքական կողմից բռնէնից Ալէքսանդր անոնց անցազորի և ստանց հրամանի սեղեր է Պոլսէն Պուլիարիա վերադարձնալ, սակայն Սուլթանի թիկնապահներէն մին եկեր է և զայն կայարանէն ետ դարձուցեր է :

— Թուրք կառավարութիւնը Պանք Օթոմանի միջոցաւ 2 միլիոն 500,000 ոսկիի փոխառութիւն մը պիտի ընէ ստիպողական պարտքերը վճարելու համար :

— Ամերիկեան ընկերութիւն մը թուրք կառավարութեան առաջարկեր է Պաղատար գիծը շինել, առանց ամէն մէկ ըրլում համար երաշխաւորութիւն պահանջելու :

— Տամաս Մահմուտ փաշային տղաները Բարիզի մէջ ուզեր են կօնքէս մը կազմել, սակայն Թրանսսական կառավարութիւնը արգիլել է յայտարարելով որ չեն կրնար թող առ սր օտար յեղափոխական քարոզիչներ Փարիզ հաւաքուին :

— Մակեդոնիայի Քոսովա նահանգին մէջ թուրք զօրքերու և պուլկարներու միջեւ մեծ ընդհարում մը տեղի ունեցեր է :

— Վանա նահանգին մէջ նոյնպէս մեծ ընդհարում մը տեղի ունեցեր է հայերու և քրիստոնէի միջեւ, զօրքը միջամտած է, բազմաթիւ ստաննուածներ և վիրաւորներ կան, նոյն նահանգին մէջ քիւրա ցեղերն ալ իրարու հետ կռուի բռնուած են :

— Ռուս զեսպանը Բ. Դրան նօթա մը տուեր է պահանջելով Սուլթանական իրաւէտով մը վաւերացուի Ռուսիոյ Փոքր Ասիոյ մէջ շինելիք երկաթուղիի համար տրուած արածուութիւնը :

— Աթինայէն կը հեռագրեն թէ Ամերիկեան նաւատորմից մը Բիրէա հասած է և շուտով պիտի մեկնի թիբեական շուրերը : Նաւատորմիչին զալուստը կապ ունի առեւանգուած միսս Սթօնի խնդրոյն հետ :

ԱՒՍՏՐԻԱ

Լէմպէրկի մէջ լեհացի ուսանողները ցոյց մը բերին և 63ի լեհական ապստամբութեան յիշատակին, ուղեր են մեծ ցոյց ընել Ռուսական հիպոտոտարանի առջև, սակայն զօրքը միջամտեր և արգիլել է :

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Գրոջմաթուղի շինող մեքենան զտնուեր է Սթարա-Չակօրայի մէջ, որ ծախուած է երկաթուղու ճանապարհով :

Ամբողջ պուլկարիոյ մէջ խուզարկութիւններ կատարուած և ձերբակալութիւններ տեղի ունեցած են :

Նիւմաից նախարարութիւնը յայտարարութիւնով մը կը հերամայէ բոլոր մէկ լեւնոց գրօշմաթուղիները վերադարձնել նոյն վարչութեան պաշտօնեան :

րուն, այդ գրօշմաթուղիները առայժմ չի պիտի գործածուին :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Շիբալօի լեկերվարականները յայտարարած են որ Գերմանական Հենտրիկ իշխանին դէմ ցոյցեր պիտի ընեն եղէ ան Շիբալօ երթոյ :

Ի Տ Ա Լ Ի Ա

Ի ռալիոյ քաղաքներէն միոյն մէջ պիտի հաւաքուին ալպանացիներու բոլոր պիտելը Սուլթանին և Եւրոպական պետութիւններուն իրենց երկրի վիճակի մասին յիշատակագիր մը գրելու և ինքնավարութիւն պահանջելու համար :

ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐՇՈՒՄ»

Կը ապագրուին «մէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակաղլուխ, հորոհանկան հրաւիրագիր, մահազդ :

Գինները յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» առ շրջանին մէջ վերսկսած ըլլալով արգէն իր պարտավունքները, ձեռնարկած է նաև պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին և նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ, յստակ վիճագիր :

Այս առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը նորկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան, որ եթէ առ երգերէն փափագողներ կան, հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ, կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան :

Արտասահմանի համար 35 սնթ. Ֆիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբին»

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

Ա.Չ.Դ

Կը ծախուի 1896ին լեւոր. 2ին իշխան Պօրիոյ մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրօշներ 1—5—15—25 սանդիմ :

Դիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վառնա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայգերբերգոյ մ հիմնել է մի գրադարան, որ նպատակ է կրել ծանօթացնել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն և օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ : Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համակարգի ուրի համար յայտնուած ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը և խնդրում ենք այն անձանց հաւատութիւններին, որոնք կամենում են գրքերով և զգիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին, ուղարկել հետեւեալ հասցէով՝ A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Հայ լրագրիչների բոլոր խմբագիրներին խնդրում է իրենց թերթերից մի մի օրինակ զրկել հետեւեալ հասցեով : Կ. Արապեանց ձեռագրի (Մէր Բուժ). բաժանորդագիրը կուղարկուի հէնց որ ստաջին համարները ստացվին : Կ. Արապեանց :

ԳՈՐԾԱՐԱՆ

Լաթ ներկելու և քիմիական մաքրելու :

Վ. Ս. ՕՅԻԼՕՅ

ԵՒ

ԻՎ. Մ. ԲՈՒՐՅՈՅ

ԲՈՒՍՅՈՒՔ

Սոյն գործարանի մասնաճիւղը որուն կառավարիչն է Բէթր ԿԼՈՒՇԲՈՅ «Իզլիստնիկի» խմբագրի, քաղաքային պարտեզին դիմացը :

Կը ներկէ կանանց և մանկական զգեստներ, մետաքսէ, բրդէ և բամբակէ գործուածքներ, նոյնպէս վաճառականական տպարաններ ու մանուածքներ : Ներկը չի թափել, միայն ներկելու տալիք ներթերը մաշած չի պիտի ըլլան :

Գինները չափաւոր են :

Ա.Չ.Դ

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գիւղէն Պէկո Սաստուրեանի, հաստատակաղմ չէկ պէտով ու յօնքերով, 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը մխիթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով :

ԿԱՂԱՆԴՉԷՔ

Նոր լոյս տեսաւ այս գրիչը արձակ և ոտանաոր :

Հեղինակը զայն գրչի պրօսանք անուանած է, և իրաւ ալ գրչի զրօսանք է :

Գինն է 40 սնթ. կը ծախուի Վարնայի մէջ Զարպհանէլեան գրատունը :

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդես անուայ, հողագործական, գիտական և արդեսագիտական

Հիմնադիր տնօրէն

Գարեգին Լ. Մեծսուրեան

Հրատարակուած է Դրոյ թիւը, շահեկան բովանդակութեամբ :

Տարեկան բաժնեգիրն 12 Ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Collegiale

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Sof. V. Snsnikianցի և Ե. Թոփչեանցի «Die sozial-ökonomich Türcei»

Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի և ընդհանրապէս թուրքիայի մասին :

Գինը 2 մարկ ճանապարհածախսով գրիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, W. 7

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ռու. Միութեան նամակ ուղարկելու և առհասարակ ամէն տեսակ գիմուժ ընելու համար պէտք է գիմել հետեւեալ հասցեով Իւնիւն ՏԷՂԻՍԻԱՆ Արև. Լ՛ԷՐՈՒՐ ՎԻՍՏՐ Լ՛ԷՖՅՈՅ ՏՐ ՇԻՒՄ 2

Սուխա Ժրնէկ

Կարգողիւ Յաննիստոյով

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական և զեղարուեստական :

Տարեկան 15 Ֆր.

Վեցամսեայ 8 Ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ОТГОВОРНИКЪ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна